ՍԱՅԱԹ-ՆՈՎՅԱՆ ՎԱՐԴԱՏՈՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹՈՒՄ

Տարիների հոլովույթում մայիսյան վերջին վարդաբույր կիրակի օրը, այս էլ 93-րդ անգամ, Թբիլիսիում նշվեց Սայաթ-Նովյան Վարդատոնը ու կրկին, ինչպես միշտ, Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու գավթի կողքին, ուր 211 տարի հանգչում է նրա սուրբ աճյունը: Դեռևս 1795 թ. Պարսից Աղա Մահմադ խանի հրոսակների սրով հենց այստեղ նահատակվեց Մեծ Մարդասերը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ առաջնորդանիստ եկեղեցում մատուցվեց Տոնական Ս. Պատարագ: Սրբազան արարողությանը ներկա էր նաև իրանահայության հոգևոր հայրերից Տ. Մեսրոպ քահանան: Հավարտ արարողության կատարվեց Հանրապետական Մաղթանք, որից հետո առաջնորդ Սրբազան Հայրը եկեղեցում ներկա խուռներամ հավատացյալներին շնորհավորեց օրվա երկու խորհուրդների առիթներով՝ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման և Վարդատոնի:

Այնուհետև սկսվեց Վարդերի ու Սայաթ-Նովայի տոնը: Ժողովրդական այս անզուգական տոնախմբության սկիզբը դրվել է 1913 թվականի աշնանը՝ Մեծն Թումանյանի, Գևորգ Բաշինջաղյանի և Իոսիֆ Գրիշաշվիլու կողմից: Այդ օրերին Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցի են հրավիրվում կովկասցի 40 աշուղներ ու գուսաններ՝ Սայաթ-Նովայի ստեղծագործություններից կատարելու համար: Գուսանական երգի վարպետները, մոտենալով Սայաթ-Նովայի շիրիմին, ծնրադիր վարդեր են դնում գերեզմանի շուրջ, իսկ Հայոց Մեծ Բանաստեղծի նախաձեռնությամբ և հայտնի նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի նախագծով պատրաստվում է շիրմաքար ու մայիսյան վերջին կիրակին հռչակվում որպես Սայաթ-Նովյան Վարդատոն:

Այդ օրից ի վեր Վարդատոնը մեծ ժողովրդականություն է վայելում ինչպես Վրաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այդ օրը մարդիկ գալիս են վարդ ու ծաղիկներով, սեր ու ժպիտներով, գալիս են խունկ ու մոմ բուրվառելու Անզուգական Երգչի անկորնչելի հիշատակին: Նրանք իրենց խոնարհումն են բերում Սայաթ-Նովայի հանճարեղ Խոսքին ու Մեղեդուն, հավերժական միասնության կոչող նրա Ձայնին: Գալիս են ամեն անգամ ինչ-որ բան սովորելու և ապա իրենց հետ տանելու Սայաթ-Նովա հզոր մտածողի Բարության և Ազնվության, Բարեկամության ու Խաղաղության դպրոցի դասերից:

Վարդատոն-2006-ին ոչ միայն Սայաթ-Նովայի անթիվ-անքանակ թբիլիսցի երկրպագուներն էին եկել, այլև ներկայացուցիչներ Վրաստանի այլևայլ շրջաններից: Եկել էին մեծահարգ հյուրեր Երևանից, նաև՝ Թեհրանից:

Ժողովրդական տոնախմբությունը բացեց և վարեց Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գևորգ Սնխչյանը: Նա շնորհավորեց բոլորին այս բազմախորհուրդ ու համամարդկային սիրո և համերաշխության օրվա առիթով:

Օրհնության և ողջույնի իր խոսքում Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը մասնավորապես ասաց. «Սայաթ-Նովան հայ ժողովրդի որդին էր, նրա ծնունդը, սակայն իր լուսեղեն, սիրաբորբ Քնարով և Գործով դարձավ ողջ մարդկության զավակը: Եվ այսօր գիշերվա անձրևին հաջորդած արևալույսով Աստված էլ կարծես ուրախանում է մեզ հետ... Սայաթ-Նովան նահատակվեց, բայց շարունակում է ապրել բոլորիս մեջ և իր ոգեղեն ներկայությամբ բարեկամության հզոր կամուրջ է հանդիսանում հայ ու վրաց ժողովուրդների միջև...»:

Ողջույնի խոսք ասաց նաև Տ. Մեսրոպ քահանան:

Տոնախմբությանն իրենց մասնակցությունը բերեցին և բարեողջույնի, երախտագիտության ու շնորհավորանքի խոսքերով հանդես եկան Վրաստանի հայերի միության նախագահ Գենա Մուրադյանը, Վրաստանի քաղաքացիական ինտեգրացիայի գծով պետնախարար Զինաիդա Բեստաևան, Վրաց Պատրիարքարանի ներկայացուցիչ Սերգո Վարդոսանիձեն, Թեհրանի պատվիրակության ղեկավար Ալֆրեդ Հավանը, «Գրական թերթի» գլխավոր խմբագիր, բանաստեղծ Սամվել Կոսյանը, արձակագիր, դոցենտ Դիանա Համբարձումյանը, հրապարակախոս, գրող Հրաչյա Մաթևոսյանը, բանաստեղծ, հրապարակախոս Լևոն Բլբուլյանը, Վրաստանի գրողների միության անդամներ, թարգմանիչներ Անահիտ Բոստանջյանը, Գիվի Շահնազարը, ով կարդաց Սայաթ-Նովայի վրացերենով գրված ստեղծագործությունները, Թբիլիսիի պետական հայկական թատրոնի գեղարվեստական ղեկավար և տնօրեն Արմեն Բայանդուրյանը և ուրիշներ:

Հանդիսավոր մասին հաջորդեց տոնախմբության ավանդական գեղարվեստական մասը, որը կազմակերպվել էր Թբիլիսիի հայկական թատրոնի ղեկավարության ջանքերով: Միջոցառմանն իրենց մասնակցությունը բերեցին վիրահայ մշակույթի մի շարք համույթներ և անհատ կատարողներ, մասնավորապես՝ «Սայաթ-Նովա» ժողովրդական երգ ու պարի համույթը (գեղարվեստական ղեկավար՝ արվեստի վաստակավոր գործիչ Մուկուչ Ղազարյան):

Թիֆլիսյան հինավուրց Մեյդանում մինչև երեկո թևածում էր Սայաթ-Նովայի ու հայ գուսանական երգի ուրախ և տոնական մթնոլորտը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ